# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«19» հունվարի 2013թ. N 39

ք. Արմավիր

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի <<բ>> ենթակետով, 2013 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կողմից իրականացվող հիմնանորոգման և կառուցման աշխատանքների ավարտի կապակցությամբ ընդունման-հանձման աշխատանքներն իրականացնելու նպատակով.

***կարգադրում եմ՝***

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. **Հանձնաժողովին (Կ. Դանիելյան)՝ հանձնաժողովի** աշխատանքներին մասնակից դարձնել կապալառու կազմակերպությունների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Արմավիրի տարածքային բաժնի աշխատակիցներին (համաձայնությամբ):
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչությանը (պետ՝ Վ.Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Մ.Քարտաշյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

***ՄԱՐԶՊԵՏ՝*** ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2013թվականի հունիս <<19>>-ի*
*N39 կարգադրության*

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

***Հանձնաժողովի նախագահ՝***

Կ.Դանիելյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

***Անդամներ՝***

Ռ.Երվանդյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Է.Անդրեասյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Ա.Թովմասյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ